ՆԱԽԱԳԻԾ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ---------- 2022թ. N------Ա

## ՈՐՈՇՈՒՄ
## ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿՆԵՐԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի N 551 որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետը՝

**Երևան քաղաքի ավագանին որոշում է.**

1.Տալ համաձայնություն.

1) դրամատուրգ, ռադիոթատրոնի հիմնադիր Գրիգոր Չալիկյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Մաշտոցի պողոտա հ.54 հասցեում փակցնելու համար,

2) կոմպոզիտոր, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ Սերգեյ Աղաջանյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Դ. Դեմիրճյան փողոց հ.25 հասցեում փակցնելու համար,

3) բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ Պարթև Մարգարյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Տերյան փողոց հ.62ա հասցեում փակցնելու համար,

4) ՀԽՍՀ ժողովրդական արտիստ, պրոֆեսոր Լաերտ Վաղարշյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակն Աբովյան փողոց հ.62 հասցեում փակցնելու համար,

5) պատմաբան, պետական, հասարակական, քաղաքական գործիչ Լյուդվիգ Ղարիբջանյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Դ. Դեմիրճյան փողոց հ.19 հասցեում փակցնելու համար:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ ՀՐ. ՍԱՐԳՍՅԱՆ

## ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

## «ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿՆԵՐԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Դրամատուրգ, ռադիոթատրոնի հիմնադիր **Գրիգոր Չալիկյանը** ծնվել է 1920 թվականի օգոստոսի 25-ին, Թուրքիայի Իզմիթ քաղաքում: 1932 թվականին գաղթել է Խորհրդային Հայաստան:

1941 թվականին ավարտել է Երևանի թատերական ստուդիան, 1953 թվականին՝ Երևանի գեղարվեստաթատերական ինստիտուտը:

1940-1946 թվականներին աշխատել է Աշտարակի, 1946-1953 թվականներին՝ Երևանի պատանի հանդիսատեսի, 1953-1959 թվականներին՝ Գ. Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոններում: Խաղացած ներկայացումներից են՝ Դ. Գազազյանի «Խաչատուր Աբովյան» (Աբովյան), Ա. Օստրովսկու «Անմեղ մեղավորներ» (Նեզնամով), Վ. Հյուգոյի «Թշվառներ» (Ժան Վալժան) և այլն:

1959 թվականից եղել է Հայաստանի հեռուստառադիոպետկոմի դրամատիկ հաղորդումների բաժնի վարիչն ու գլխավոր ռեժիսորը: Եղել է հայկական ռադիոթատրոնի հիմնադիրներից:

1977 թվականին արժանացել է արվեստի վաստակավոր գործչի կոչմանը:

Գրիգոր Չալիկյանը մահացել է 2004 թվականին, Երևանում:

Գրիգոր Չալիկյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Մաշտոցի պողոտա հ.54 հասցեում փակցնելու վերաբերյալ միջնորդություն է ներկայացվել Հայաստանի գրողների միության և Հայաստանի հանրային ռադիոյի ղեկավարության կողմից:

Կոմպոզիտոր, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ **Սերգեյ Աղաջանյանը** ծնվել է 1929 թվականի սեպտեմբերի 1-ին Իրանի Փեհլևի քաղաքում: 1937 թվականին ընտանիքի հետ տեղափոխվել է Թեհրան:

Սովորել է Թեհրանի պետական կոնսերվատորիայում: 1950 թվականին հանդես է եկել մենահամերգով և առաջինը Թեհրանում կատարել է Ա. Խաչատրյանի ջութակի կոնցերտը:

1953 թվականին տեղափոխվել է Երևան: 1959 թվականին ավարտել է Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի Արամ Շամշյանի ջութակի

դասարանը, 1975 թվականին՝ Էդվարդ Միրզոյանի կոմպոզիցիայի դասարանը: 1975 թվականին դարձել է Հայաստանի կոմպոզիտորների միության անդամ:

Դասավանդել է Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայում:

Ստեղծագործությունները բազմաժանր են՝ վոկալ գործեր, սոնատներ, խմբերգային կանտատա և այլն:

1976 թվականին արժանացել է ՀՀ պետական մրցանակի, 1981 թվականին՝ Հայաստանի արվեստի վաստակավոր գործչի կոչմանը:

Սերգեյ Աղաջանյանը մահացել է 2005 թվականին, Երևանում:

Սերգեյ Աղաջանյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Դ. Դեմիրճյան փողոց հ.25 հասցեում փակցնելու վերաբերյալ միջնորդություն է ներկայացվել Հայաստանին կոմպոզիտորների միության նախագահ Արամ Սաթյանի կողմից:

Բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ **Պարթև Մարգարյանը** ծնվել է 1898 թվականի սեպտեմբերի 20-ին:

1927 թվականին ավարտել է Երևանի պետական համալսարանի բժշկական ֆակուլտետը: 1929-1950 թվականներին եղել է բժշկական ինստիտուտի մանկաբարձության և գինեկոլոգիայի ամբիոնի ասիստենտ, ապա՝ դոցենտ: 1937 թվականին Երևանում կազմակերպել է և ղեկավարել (մինչև 1950 թվականը) քաղաքային ծննդատունը, միաժամանակ եղել է բժշկական ինստիտուտի բուժական ֆակուլտետի դեկան (1939-1943թթ.), ՀԽՍՀ առժողկոմի առաջին տեղակալ (1943-1945թթ.):

1949-1973 թվականներին եղել է մանկաբարձության և գինեկոլոգիայի ԳՀԻ-ի տնօրեն (1973 թվականից՝ գիտական խորհրդատու), միաժամանակ 1954 թվականից բժշկական ինստիտուտի սանհիգիենայի, մանկաբարձության (1954-1963թթ.) և բժիշկների կատարելագործման (1958-1962թթ.) և գինեկոլոգիայի ամբիոնի վարիչ:

1981 թվականին Մարգարյանի անունով է կոչվել Երևանի թիվ 3 կլինիկական ծննդատունը:

Պարթև Մարգարյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Տերյան փողոց հ.62ա հասցեում փակցնելու վերաբերյալ միջնորդություն է ներկայացվել նրա թոռնուհի Բելլա Մարգարյանի կողմից:

ՀԽՍՀ ժողովրդական արտիստ, պրոֆեսոր **Լաերտ Վաղարշյանը** ծնվել է 1922 թվականի հունիսի 6-ին, Կրասնոդար քաղաքում: 1924 թվականին տեղափոխվել է Երևան:

1940 թվականին, Ս. Շահումյանի անվան դպրոցն ավարտելուց հետո, ընդունվել է Մոսկվայի Համամիութենական կինոինստիտուտ՝ ռեժիսորական բաժին: Պատերազմի տարիներին նշանակվել է աշխատանքի՝ որպես ռեժիսորի օգնական:

1946 թվականին ավարտել է նաև Մոսկվայի հայկական մշակութային տանը կից բարձրագույն ռեժիսորական կուրսերը՝ կինոյի գծով:

1947 թվականին Բեռլին քաղաքի սովետական զորքերի թատրոնում աշխատել է որպես ռեժիսոր:

1951 թվականին գերազանց պաշտպանել է դիպլոմային աշխատանքը, այնուհետև վերադարձել է Երևան, ընդունվել «Հայֆիլմ» կինոստուդիա: Նկարահանել է մի շարք դոկումենտալ ֆիլմեր, դրանցից են՝ «Վերադարձ հայրենիք», «Ջրերը Սևանի», նաև կարճամետրաժ դոկումենտալ ֆիլմ՝ «Փեսատես», որը հանդիսացել է որպես առաջնաելույթ:

1957 թվականին նկարահանել է «Առաջին սիրո երգը» ֆիլմը (Յու. Երզնկյանի հետ):

1960 թվականին նկարահանել է «Կոչված են ապրելու» կինոժապավենը, որը Երկրորդ Համաշխարհային պատերազմի մասին է և ցուցադրվել էր Մոսկվայի 2-րդ Միջազգային կինոփառատոնում:

1963 թվականին նկարահանել է «Մարտիրոս Սարյան» վավերագրական լիամետրաժ կինոնկարը, որը 1965 թվականին Կիևի համամիութենական փառատոնում ստացել է մրցանակ:

1973 թվականին նկարահանել է «Քառս» լիամետրաժ գեղարվեստական կինոնկարը, որը 1974 թվականին համամիութենական կինոփառատոնում արժանացել է մրցանակի՝ որպես դասական գրականության «Լավագույն էկրանացում»:

Լաերտ Վաղարշյանը մոտ 200 հոդվածների և 5 գրքերի հեղինակ է:

1967-1976 թվականներին ստանձնել է Հայաստանի կինեմատոգրաֆիստների միության նախագահի պաշտոնը:

1976 թվականին Լաերտ Վաղարշյանին շնորհվել է ՀԽՍՀ ժողովրդական արտիստի կոչումը: Պարգևատրվել է Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանով: 1982 թվականին արժանացել է պրոֆեսորի կոչմանը:

Լաերտ Վաղարշյանը մահացել է 2000 թվականին, Երևանում:

Լաերտ Վաղարշյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Աբովյան փողոց հ.62 հասցեում փակցնելու վերաբերյալ միջնորդություն է ներկայացվել նրա թոռնուհի Լիլիթ Վաղարշյանի կողմից:

Պատմաբան, պետական, հասարակական, քաղաքական գործիչ **Լյուդվիգ Ղարիբջանյանը** ծնվել է 1922 թվականին, Երևանում:

1940 թվականին ավարտել է հ.4 միջնակարգ դպրոցը, 1945 թվականին՝ Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետը, 1951 թվականին՝ ասպիրանտուրան:

1960 թվականին պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն, 1975 թվականին նրան շնորհվել է դոցենտի, 1990 թվականին՝ պրոֆեսորի կոչում:

1945-1951 թվականներին կատարել է կոմերիտական ղեկավար աշխատանք, եղել է ՀԼԿԵՄ Երևանի Կիրովյան շրջկոմի, ապա՝ Երքաղկոմի առաջին քարտուղար: 1951-1953 և 1957-1961 թվականներին ղեկավարել է ԵՊՀ կուսկոմիտեն, 1953 թվականին եղել է ՀԿԿ Երքաղկոմի երրորդ քարտուղար, այնուհետև՝ ՀԿԿ Կենտկոմի պատասխանատու կազմակերպիչ, 1954-1957 թվականներին՝ ՀԿԿ Սպանդարյանի շրջկոմի առաջին քարտուղար, 1961-1966 թվականներին՝ ՀԿԿ Երքաղկոմի երկրորդ, 1966-1975 թվականներին՝ առաջին քարտուղար, 1975-1988 թվականներին՝ ՀԽՍՀ բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթության նախարար, 1988-1992 թվականներին՝ նախարարի առաջին տեղակալ, իսկ 1992-2007 թվականներին՝ ԵՊՀ պատմության թանգարանի տնօրեն:

Կուսակցական աշխատանքին զուգընթաց շուրջ 50 տարի զբաղվել է մանկավարժական գործունեությամբ: 1945-1947 թվականներին՝դասավանդել է Երևանի բժշկական ինստիտուտում, 1945 թվականից՝ ԵՊՀ-ում:

1958 թվականին ընտրվել է ՀԿԿ Կենտկոմի, իսկ 1966-1976 թվականներին՝ Կենտկոմի բյուրոյի անդամ, եղել է ՀԽՍՀ և ԽՍՀՄ Գերագույն խորհուրդների մի շարք գումարումների պատգամավոր:

Հեղինակ է ավելի քան 40 գիտական աշխատանքների:

Պարգևատրվել է Աշխատանքային կարմիր դրոշի, Ժողովուրդների բարեկամության շքանշաններով, «Մովսես Խորենացի» և այլ մեդալներով ու պատվոգրերով:

Լյուդվիգ Ղարիբջանյանը մահացել է 2011 թվականին, Երևանում:

Լյուդվիգ Ղարիբջանյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Դ. Դեմիրճյան փողոց հ.19 հասցեում փակցնելու վերաբերյալ միջնորդություն է ներկայացվել ԵՊՀ ղեկավարության կողմից:

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի «Հայաստանի Հանրապետությունում պետական և հասարակական նշանավոր գործիչներին նվիրված հուշարձանների իրականացման կարգը հաստատելու մասին» N 551 որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետը՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման նախագիծը։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ ՀՐ. ՍԱՐԳՍՅԱՆ

## ՏԵՂԵԿԱՆՔ

## «ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿՆԵՐԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Հուշատախտակների տեղադրման մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

## ՏԵՂԵԿԱՆՔ

## «ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿՆԵՐԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Հուշատախտակների տեղադրման մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չեն սպասվում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ ՀՐ. ՄԱՐԳՍՅԱՆ